

**ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ ՈՐՊԵՍ
ԼԵԶՎԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ**

ՄԻՐԶՈՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի օտար լեզուների ուսուցման ամբիոնի դասախոս, հայցորդ էլփոստ՝ mirzoyanlusine46@aspu.am, lusine.mirzoyan@mail.ru

Հոդվածում ներկայացվում է դարձվածաբանական միավորների դերն ու նշանակությունը անգլերենի դասավանդման մեջ լեզվամշակութային կոմպետենցիայի զարգացման տեսանկյունից: Լեզուն դիտարկվում է որպես ոչ միայն բառապաշարի և քերականական միավորների ամբողջություն, որոնց լավ տիրապետելը կնշանակի լեզվի լավ իմացություն, այլ լեզվամշակութային ներկայացման գլխավոր տարր, որտեղ մեծ ուշադրության են արժանի դարձվածաբանական միավորները:

Ակնհայտ, որ դարձվածաբանական միավորներն ուղղակի բառաշարքեր չեն: Նրանք կայուն կապակցություններ են, որոնց մեջ գործածված առանձին բառերը զրկվում են իրենց բառային իմաստներից և ձեռք են բերում դարձվածաբանորեն կապված իմաստ:

Հոդվածում խոսվում է վերջիններիս դասավանդման տարբեր միջոցների ու հնարների մասին, որոնք հաջողությամբ կիրառվել են ոչ մասնագիտական դասընթացներում: Ակնհայտ է, որ անգլերենի դարձվածքների ուսուցումը սովորողին գիտելիք է տալիս այդ լեզվի մշակութային առանձնահատկությունների, ազգային մտածելակերպի և կենդանի համատեքստը ճիշտ հասկանալու վերաբերյալ:

Հոդվածագիրը հանգում է այն եզրակացությանը, որ դարձվածաբանական միավորների դասավանդումն անգլերենում կարող է մեծապես նպաստել լեզվամշակութային կոմպետենցիայի զարգացմանը:

Բանալի բառեր՝ դարձվածք, դարձվածային միավոր, լեզվամշակութային կոմպետենցիա, լեզվակիր, բառաշղթա, մշակույթ, համատեքստ:

Ժամանակակից աշխարհում անգլերենը միջազգային լեզվի կարգավիճակ ունի: Գիտական, քաղաքական, տնտեսական ու մշակութային հարաբերությունների զարգացմանը զուգընթաց ողջ աշխարհում ծառացել է



միջազգային անսահմանափակ հաղորդակցում ապահովելու պահանջը: Հենց այս համատեքստում էլ անգլերենը ձեռք է բերել առանձնակի կարևորություն՝ որպես համատարած հաղորդակցման միջոց, որի արդյունավետ կիրառումն այսօր լայն հնարավորություններ է ստեղծում հնարավորինս նպատակային դարձնելու մարդկային շփումը միջազգային մակարդակում՝ հնարավորություն տալով մասնագետներին կատարելագործելու իրենց մասնագիտական հմտություններն այս կամ այն բնագավառում, քննարկելու մասնագիտական թեմաներ միջազգային հարթակներում, իրականացնելու փորձի փոխանակում այլազգի գործընկերների հետ, տեղայնացնելու դրսից վերցրած փորձը, ինչպես նաև պարբերաբար հետևելու մասնագիտական զարգացման նոր միտումներին:

Միջազգային հարաբերությունների, մշակութային և կրթական կապերի, օտար երկրների միջև առևտրային գործունեության ընդլայնմանը զուգընթաց անգլերենի ոչ միայն ընդհանուր, այլև լեզվական և մշակութային առանձնահատկությունների իմացության անհրաժեշտություն է առաջանում: Այստեղ մեծապես կարևորվում է լեզվամշակութային կոմպետենցիայի դերը: Վերջինս ոչ միայն լեզվի ուսուցումն է, այլ լեզուն որպես մշակույթի բաղադրիչ ու անբաժանելի մաս դիտարկելը: Ըստ էության «լեզվական կոմպետենցիա» եզրույթն ինքնին հարաբերական է, քանի որ 1. տարբեր մշակութակիրներ ունեն լեզվի ճիշտ կիրառման իրենց պատկերացումները, 2. յուրաքանչյուր էթնիկ խումբ մշակել է լեզվական կոմպետենցիան գնահատելու իր մեխանիզմը, 3. հաղորդակցման ընթացքում ցուցաբերած կոմպետենցիայի մակարդակը կարող է տարբերվել՝ կախված հաղորդակցության նպատակներից:

Գոյություն ունի շատ տարածված մի կարծիք. որքան շատ բառ գիտի սովորողը, այնքան ավելի հարուստ է իր բառապաշարը: Ինչևէ, կա նաև բառապաշարի չափման մեկ այլ տեսակետ, համաձայն որի՝ սովորողը պետք է տիրապետի օտար լեզվում բառերի հնարավոր համադրումներին: Որոշ լեզվաբաններ դրանք անվանում են «բառային արտահայտություններ» կամ «բառային տարրեր», մյուսներն էլ՝ «բառաշղթաներ»:

Ն.Մ.Շանսկին դարձվածային արտահայտություններն իրենց կազմությամբ և կիրառությամբ համարում է կայուն դարձվածային միավորներ, որոնք ոչ միայն բաժանելի են իմաստային առումով, այլ նաև ամբողջությամբ կազմված են այնպիսի բառերից, որոնք կարող են դուրս գալ տվյալ կապակցության կազմից և կազմել այլ ազատ կապակցություններ [3]:

Մեծ է ռուս հայտնի լեզվաբան Վ.Վինոգրադովի ավանդը դարձվածաբանության ձևավորման և զարգացման մեջ: Ըստ իմաստային սերտության աստիճանի՝ ակադեմիկոս Վ.Վինոգրադովը ռուսերենի դարձվածքները բաժանում էր երեք հիմնական խմբերի. 1. Դարձվածային սերտաճումներ (Фразеологические сращения). սրանք այն դարձվածքներն են, որոնց իմաստը չի որոշվում բաղադրիչների իմաստով (Once in a blue moon-շատ հազվադեպ, under the rose-հանգիստ, հանդարտ), 2. Դարձվածային միասնություններ (Фразеологические единства). սրանք դարձվածքներ են, որոնց նշանակությունն ինչ-որ չափով պատճառաբանված է բաղադրիչների իմաստով (To come to one's sense-միտքը փոխել, to fall into a rage-բարկանալ), 3. Դարձվածային կապակցություններ (Фразеологические сочетания). սրանք այն դարձվածքներն են, որոնց ընդհանուր նշանակությունը լիովին կախված է բաղադրիչների նշանակությունից (To make an attempt-փորձել, to make haste-շտապել) [2]:

Ս.Գ.Գավրիինը քննադատում է դարձվածքը նեղ առումով ընդունող լեզվաբաններին, քանի որ, ըստ նրա, նեղ ըմբռնումը հնարավորություն չի տալիս համակողմանիորեն ուսումնասիրել բոլոր տեսակի դարձվածային միավորները և դրանց քերականական, իմաստային ու կառուցվածքային առանձնահատկությունները, բացահայտել նրանց իմաստագործառական ոլորտները: Ս.Գավրիինն առաջարկում է բոլոր դարձվածային միավորները բաժանել երկու մեծ խմբի՝ բառակապակցության և նախադասության կառուցվածքային տիպերի [3]:

Յուրաքանչյուր ժողովրդի լեզվամտածողության ինքնատիպությունն ու յուրահատկությունն ընկալելու համար անհրաժեշտ է ծանոթ լինել տվյալ լեզվի դարձվածքներին կամ դարձվածաբանական միավորներին: Դրանցում արտահայտված են ժողովրդի հարուստ կենսափորձը, օբյեկտիվ աշխարհի առարկաների և երևույթների մասին նրա պատկերացումները, մարդկային փոխհարաբերությունների նկատմամբ վերաբերմունքը:

Մշակույթի դերի սահմանումը տարբեր կերպ է տրվում կիրառական լեզվաբանության մեջ: Օրինակ՝ Ա.Հովդեյն առաջարկեց կիրառական լեզվաբանության մեջ տարբերակում մտցնել մշակույթի երկու հարացույցերի միջև:

Առաջին հարացույցը՝ «լայն մշակույթը», ներկայացնում է էթնիկ ազգային կամ միջազգային խմբի էական հատկանիշներն ու չափանիշները: Երկրորդ հարացույցը՝ «նեղ մշակույթը», բնութագրում է սոցիալական փոքր



խմբավորումների և փոքրամասնությունների գործունեության մշակույթը: Հովիդեյը պնդում է, որ լայն մշակույթը խոցելի է «օտարերկրյա» ուսանողների, ուսուցիչների և նրանց կրթական համատեքստերի մշակութաբանական կրճատման համար: Մյուս կողմից, նեղ մշակույթը նպաստում է մշակույթի՝ որպես «սոխի կճեպի» ավանդական հայացքի փոփոխությանը՝ նվազեցնելով փոքրամասնությունների խմբերի կարծրատիպերը և բարձրացնելով ժամանակակից հասարակությունների բազմամշակութային ասպեկտի մասին իրազեկվածությունը [5]:

Մշակույթը միաժամանակ և՛ գործունեություն է, և՛ վիճակ, և՛ այն, ինչ ընկած է դրանց միջև, այն է՝ կրթությունը: Մշակույթը մարդուն, նրա միտքը կրթելու, ստեղծագործական ունակությունները զարգացնելու գործունեությունն է: Մշակույթը նաև կրթված մարդու գիտելիքների, կարողությունների և որակների դրսևորման ընդհանուր վիճակն է: Այն կարող է դիտարկվել որպես հանրամշակութայնացման հիմք, քանի որ իմաստավորում է հասարակական կյանքը:

Ըստ Ի. Թիլորի՝ մշակույթը ներառում է ճանաչողությունը, հավատքը, արվեստը, բարոյականությունը, իրավունքը, սովորույթները և մարդու՝ որպես հասարակության անդամի ձեռք բերած մյուս հմտությունները:

Բենվենիստը մշակույթը սահմանում է «որպես հարաբերությունների և արժեքների վարքականոնով կարգավորվող պատկերացումների բարդ ամբողջություն, որը խորհրդանիշների մի ամբողջ աշխարհ է՝ միավորված հատուկ կառուցվածքով, որ լեզուն արտահայտում և փոխանցում է» [6]: Ընդունված է ասել, որ մշակույթը բազմանիստ հայելի է, որում արտացոլվում են ոչ միայն մարդուն շրջապատող իրական աշխարհը, իրական կենսապայմանները, այլև տվյալ ազգի հասարակական գիտակցությունը, նրա աշխարհընկալումը, մտածողությունը, ազգային բնութագիրը, կենսակերպը, ավանդույթներն ու սովորույթները, բարոյականությունն ու հոգեբանությունը, կայուն արժեքահամակարգը:

Դարձվածքը կամ դարձվածաբանական միավորը մշակույթի արտացոլման առանցքային իրողություններից է, լեզվի գունագեղ կողմերից մեկը, որը խոսքը դարձնում է ավելի արտահայտիչ ու պատկերավոր՝ ազատելով միօրինակությունից ու պարզունակությունից:

Այս կամ այն ժողովրդի մշակույթին ծանոթանալու, լեզուն ամբողջովին ընկալելու լավ միջոց ու հնարավորություն կարող է հանդիսանալ տվյալ լեզ-



վում լայն կիրառություն ունեցող դարձվածային միավորների ուսումնասիրությունը:

Ամենօրյա շփման մեջ անգամ իրենց ուրույն դերն ունեն դարձվածքները: Նրանք օգնում են մարդկանց շեշտել իրենց դիտարկումները, դատողություններն ու բացատրությունները և դրանք դարձնել ավելի աշխույժ ու հետաքրքիր: Դարձվածաբանական միավորներն ամենուր են՝ լեզվակիրների հետ շփման մեջ, հեռուստացույց դիտելիս, ռադիո լսելիս, ամսագիր կամ թերթ կարդալիս, դասագրքերում, գեղարվեստական գրականության մեջ, մամուլում և այլուր: Հետևաբար դարձվածքի ուսումնասիրությունն ու նրա ուսուցումը միշտ պետք է լինեն արդիական գործընթացներ: Դրանք մեծապես կօգնեն դարձվածքների իմացությանն կիրառման կոմպետենտությանը նպաստող գիտական հետազոտությունների ավելացմանը:

Անկասկած մեծ է օտար լեզվի ուսուցման նկատմամբ սովորողների հետաքրքրության և մոտիվացման բարձր մակարդակի պահպանման անհրաժեշտությունը: Կրթության նկատմամբ սովորողների հետաքրքրության կարևորագույն գործոններից մեկը լեզվամշակութային մոտեցման գրագետ իրականացումն է՝ որպես օտար լեզուների ուսուցանման կարևոր բաղադրիչ:

Ներկայումս ակնհայտ է այլ մշակույթների և նրանց ներկայացուցիչների նկատմամբ ըմբռնումը, հանդուրժողականությունն ու համարժեք վերաբերմունքը սովորողների շրջանում ուսուցման կարևորագույն տարր դարձնելու անհրաժեշտությունը միջազգային հարաբերությունների հաստատման ու զարգացման շնորհիվ:

Ինչպես հայտնի է, դարձվածային միավորները, ասացվածքները և առածները ցանկացած ժողովրդի մշակութային, պատմական առանձնահատկությունների լեզվական դրսևորումներն են, որոնք հարստացնում են ազգային լեզուն և պատկերավոր մտածողությունը: Մասնավորապես դարձվածային միավորները «խոսքում պատրաստի, վերարտադրվող կայուն արտահայտություններ են, որոնք բնութագրվում են բաղադրիչների մասնակի կամ լրիվ վերաիմաստավորմամբ»[1], ասացվածքները՝ «խրատական բնույթի կայուն արտահայտություններ են, որոնք շարահյուսորեն կազմավորված են որպես պարզ կամ բարդ նախադասություններ:

Ի տարբերություն առածների, որոնք գործածվում են փոխաբերական իմաստով, ասացվածքներն ունեն ուղղակի նշանակություն, թեև ունեն ընդ-

հանրացված իմաստ և լայն մեկնաբանման հնարավորություն են ընձեռում» [1]:

Հաճախ դարձվածքի համարժեքը տարբեր լեզուներում, կապված տարբեր պատկերացումների ու այլաբանությունների հետ, արտահայտվում է միանգամայն այլ բաղադրիչներով: Այս խնդրում լիարժեք թարգմանության հասնելու համար հարկավոր է դիտարկել նաև համատեքստը: Համատեքստն է որոշում՝ որքանով «նեղ» կամ «լայն» նշանակություն պետք է ունենան թարգմանական տեքստում բառերը, որոնք և կկազմեն անհրաժեշտ իմաստն արտահայտող նախադասությունը: Այն ընդգծում է բառի, բառակապակցության, արտահայտության, դարձվածքի, ասույթի կոնկրետ բովանդակությունը, ինչպես նաև արտահայտչականությունը:

Դարձվածաբանական միավորները թարգմանելիս անհրաժեշտ է հաշվի առնել լեզվական և արտալեզվական գործոնները, ունենալ հզոր գործիքակազմ. փայլուն տիրապետել երկու լեզուներին, մշակութային արժեքներին, գրականությանը: Դարձվածաբանական միավորներն առհասարակ ունեն գործածության հատուկ շրջանակ: Դարձվածքների շատ խմբեր քիչ են ուսումնասիրված, ինչպես նաև թարգմանված: Նման ուսումնասիրությունները հնարավորություն են ընձեռում դարձվածքների թարգմանության, տարածման վերաբերյալ գործնականում նոր լուծումներ առաջարկել և երևան են հանում շատ հետաքրքիր լեզվական և մշակութային իրողություններ:

Դարձվածային միավորների դասավանդման լեզվամշակութային մոտեցման կարևորությունը լեզուն հնարավորինս արդյունավետ ու խորը մատուցելու նպատակ ունի:

Օտար լեզվի ուսուցչի առջև դրված է շատ կարևոր մի խնդիր. առարկան ճիշտ դասավանդել ոչ միայն քերականության, բառապաշարի և հնչյունաբանության տեսանկյունից, այլև ծանոթացնել սովորողներին ուսուցանվող լեզվի լեզվակիրների ազգային մտածելակերպի և տվյալ երկրի մշակութային առանձնահատկություններին, ինչպես նաև սովորողների մոտ ձևավորել համարժեք պատկերացում օտարալեզու մշակույթի ներկայացուցիչների աշխարհայացքի վերաբերյալ:

Իս. Աբովյանի անվան ՀՊՄՀ գեղարվեստական կրթության ֆակուլտետի երկրորդ կուրսի ուսանողների հետ 2020թ. փետրվար-ապրիլ ամիսների ընթացքում իրականացվել է անգլերենի դարձվածաբանական միավորների փորձարարական ուսուցում, որը մեծապես նպաստել է ուսանողների շրջանում լեզվամշակութային կարողությունների զարգացմանը: Ուսանողները

հիմնականում «Գեղարվեստական նկարչություն և արվեստի տեսություն», «Պատմություն» բաժիններից էին: Սովորողներին տրվել են դարձվածային միավորներ պարունակող մի շարք առաջադրանքներ.

1. Տիպիկ իրավիճակի ստեղծում, որտեղ սովորողը կիրառում է այդ համատեքստի հետ կապված, նախապես տրված դարձվածային միավորներ, որոնք համապատասխան միջավայրում բանավոր ճիշտ կիրառելով՝ սովորողի մոտ կամրապնդվի անցած նյութը: Բանավոր հարցման միջոցով զարգանում են սովորողի արտասանական հմտությունները, օտար լեզվով մտքերը կառուցելու, դրանք հնարավորինս բնական կերպով արտահայտելու ունակությունը:
2. Դարձվածային միավորների կիրառում գրավոր վարժությունների տեսքով, որոնք, դարձվածքին ծանոթացնելուց բացի, կնպաստեն նաև քերականական գիտելիքների ամրապնդմանը:
3. Մեկ կամ մի քանի դարձվածաբանական միավորի կիրառում ամեն դասի սկզբին, որը կնպաստի տվյալ լեզվամշակույթին հնարավորինս մոտ կանգնելուն, քանի որ դարձվածքը կարող է վերցված լինել առօրյա կյանքից, գեղարվեստական գրականությունից, քաղաքականության բնագավառից, լուրերից և այլն: Օրինակ՝ դարձվածքներ՝ կապված ուտելիքի հետ՝ big cheese-կարևոր անձնավորություն, bad egg-մարդ, ով միշտ խնդիրների մեջ է, apple of one's eye-մեկի սիրելին, մարմնի մասերի հետ՝ all ears-համակ ուշադրություն, give a hand /lend a hand/-օգնության ձեռք մեկնել, break a leg-հաջողություն, գույների հետ՝ green light-թույլտվություն, golden opportunity-կատարյալ հնարավորություն, black sheep- խմբի վատ կամ ավելորդ անդամ, հագուստի հետ՝ put a sock in it-դադարել խոսել, keep something zipped-մի բան գաղտնի պահել, keep one's shirt on-փորձել հանգիստ մնալ, կենդանիների հետ՝ dog days-շատ շոգ օրեր, cat nap-կարճ քուն, copy cat-մարդ, ով կրկնօրինակում է ուրիշների արարքները և այլն:

Մեր ուսումնասիրությունը ցույց տվեց, որ նմանատիպ աշխատանքը կօգնի ազատվելու լարվածության մթնոլորտից ուսումնառության ընթացքում և կմոտիվացնի սովորողին լեզվի ընկալման և հաղորդակցման հարցում:

4. Որևէ դարձվածք ներկայացնող պատկերի մանրամասն նկարագրում. քանի որ սովորողների մեծ մասը նկարիչներ էին, փորձ արվեց իրենց տրված դարձվածքը հնարավորինս ակնհայտ պատկե-



րող նկար ստանալ: Այնուհետև սովորողները փոխանակեցին նկարները, և յուրաքանչյուրը, նայելով ընկերոջ նկարածին, նկարագրության միջոցով փորձում էր գտնել տվյալ նկարում պատկերված դարձվածքը:

5. Պատմվածքի շարադրում՝ հնարավորինս շատ դարձվածքների կիրառմամբ: Դարձվածքները նախապես տրվում են սովորողին, հնարավոր է ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանք:
6. Հայերենում և անգլերենում դարձվածքների համընկնման հետ կապված աշխատանք: Ուսուցիչն ասում է անգլերեն դարձվածքը, սովորողները փորձում են գտնել դրա համարժեքը հայերենում, այնուհետև հայերենից անգլերեն տարբերակն են փորձում գտնել: Ընդ որում դարձվածքը կարող է երկու լեզվում արտահայտել նույն իմաստը նույն բառերի միջոցո, կամ ունենալ նույն իմաստը տարբեր բառերի միջոցով: Այս առումով դարձվածքները կարելի է պայմանականորեն բաժանել երկու խմբի.

ա. դյուրըմբռնելի, քանի որ երկու լեզվում էլ բաղադրիչ մասերը նույնն են, օրինակ՝ սառը ջուր լցնել վրան-pour cold water on smb, զգալ ինչպես ձուկը ջրում-feel like a fish in the water, վարդագույն ակնոցներ-rose coloured glasses,

բ. դժվար ըմբռնելի, քանի որ չունեն համարժեքը մայրենի լեզվում, օրինակ՝ մինչև կյանքի վերջ նյութապես ապահովված լինել-have one's bread buttered for life:

7. Փորձարարական ուսուցումն ընդգրկում էր մի շարք մտավոր գործընթացներ՝ նոր տեղեկատվության ընկալում, մտապահում, ճանաչում, ինչպես նաև մշակում ու փոխանցում: Դրանցից յուրաքանչյուրը ֆիզիկական և մտավոր ունակությունների և գործողությունների համադրություն է՝ պայմանավորված մի շարք գործոններով՝ սովորողի տարիքը, մտավոր ներուժը, աշխարհայացքը, ընդհանուր հաղորդակցական-լեզվական գիտելիքները, լեզվամտածողությունը, լեզվազգացողությունը և այլն: Այդ ամենն իրականացվել է բազում մեթոդների ու հնարների կիրառմամբ (հաղորդակցական, քերականական, թարգմանական, խաղային մեթոդներով և այլն):

Այսպիսով, համադրելով տեսական աղբյուրներից ստացած գիտելիքներն ու վերջիններիս կիրառումը գործնականում, կարող ենք փաստել, որ դարձվածաբանական միավորներն այսօր էլ բավական արդի են անգլերենի

ուսուցման մեջ: Պարզապես դրանք սովորողին մատուցելիս պետք է ճիշտ մոտեցում ցուցաբերել, քանի որ սովորել անգլերեն նշանակում է հնարավորինս մոտ կանգնել լեզվակրի խոսքին, վերջինիս մշակույթին, իսկ այդ գործում անժխտելի է դարձվածաբանական միավորների ստանձնած դերը:

Օգտագործված գրականություն

1. Նազարյան Ա., Բաղդասարյան Լ., Թարգմանաբանական ուսումնական ձեռնարկ, Երևան, Ամարաս, 2000, էջ. 263-277:
2. Виноградов В. В., Русский язык, изд. 2-е. М., «Высшая школа», 1972.
3. Гаврин С. Г., Проблемы функционирования и развития фразеологического фонда русского языка в связи с общими вопросами теории фразеологии, Дисс. докт. филол. наук, Л., 1975, с. 24-32.
4. Шанский Н. М., Фразеология современного русского языка, М., «Высшая школа», 1985, с. 60-71.
5. Holliday A., Small cultures. Applied Linguistics, 1999, 237-264., p. 241.
6. Benveniste E., Problemes De Linguistique Generale, 1966, p. 30.
7. Buringham, L. A multilingual didactic approach to idioms using a conceptual framework. Language Design. Journal of Theoretical and Experimental Linguistics, 2006.
8. <https://www.nebrija.com/revista-linguistica/lingua-cultural-approach-to-teaching-english-idioms-to-georgian-students.html>
9. <https://www.fluentu.com/blog/educator-english/teaching-english-idioms/>
10. <https://onlineteachersuk.com/english-idioms/>
11. <http://blog.tesol.org/6-websites-for-learning-english-idioms/>

TEACHING ENGLISH IDIOMS AS A MEANS OF LINGUACULTURAL COMPETENCE DEVELOPMENT

MIRZOYAN LUSINE

*Instructor, PhD student at ASPU after Kh. Abovyan, Chair of Teaching
Foreign Languages*

e-mail: mirzoyanlusine46@aspu.am, lusine.mirzoyan@mail.ru

The article presents the role and significance of phraseological units in teaching English language from the point of view of linguacultural competence



development. Language is considered not only as a set of vocabulary and grammatical units, the good mastery of which will mean a good knowledge of the language, but also the main element of the presentation of linguaculture, where the phraseological units deserve much attention.

It becomes obvious that phraseological units are not just word series. They are set expressions and the meaning of each word, which is an integral part of it, is completely different from the general meaning of the phrase.

The article discusses the various teaching methods and means, which have been successfully used in the non-professional course. It becomes obvious that teaching English idioms gives the learner knowledge about the cultural peculiarities of that language, about the national mentality, and helps understanding the living context correctly.

Therefore, we conclude that teaching phraseological units in English can greatly contribute to the development of linguacultural competence.

Key words: *idiom, phraseological unit, linguacultural competence, native speaker, word chain, culture, context.*

ОБУЧЕНИЕ ИДИОМАМ АНГЛИЙСКОГО ЯЗЫКА КАК СРЕДСТВО РАЗВИТИЯ ЛИНГВОКУЛЬТУРНОЙ КОМПЕТЕНЦИИ

МИРЗОЯН ЛУСИНЕ

Преподаватель, соискатель кафедры обучения иностранным языкам,

АГПУ им. Х. Абовяна

электронная почта: mirzoyanlusine46@aspu.am, lusine.mirzoyan@mail.ru

В статье представлены роль и значение фразеологизмов в обучении английскому языку с точки зрения развития языковой и культурной компетенции. Язык рассматривается не только как совокупность лексических и грамматических единиц, владение которыми будет означать хорошее знание языка, но и как главный элемент представления языковой культуры, грамматические единицы которой заслуживают большого внимания.

Становится очевидным, что фразеологизмы — это не просто ряды слов. Это устойчивые выражения, в которых значение каждого слова является неотъемлемой частью фразы и полностью отличается от общего значения последнего.



В статье рассматриваются различные методы и приемы обучения, успешно применяемые в непрофессиональном обучении. Становится очевидным, что преподавание английских фразеологических единиц дает учащимся знания о культурных особенностях этого языка, о правильном понимании национального менталитета и живой речи.

Таким образом, мы делаем вывод, что обучение фразеологическим единицам английского языка может в значительной степени способствовать развитию межкультурной компетенции.

Ключевые слова: *идиома, фразеологическая единица, лингвокультурная компетенция, носитель языка, цепочка слов, культура, контекст.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 29.08.2021թ.:

Հոդվածը գրախոսվել է 15.09.2021թ.: